

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/1

27 հուլիսի 2012թ.

Քննարկվեց «Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ 11.06.2012թ. գրությամբ բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ 31.05.2012թ. թիվ 2109996 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ պետի 20.04.2012թ. թիվ 2109996 հանձնարարագրի, «Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում, որն ընդգրկել է 26.03.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 31.05.2012թ-ին կազմվել է թիվ 2109996 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 120.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգման պահին՝ 15.05.2012թ-ին ժամը 11:00-ին, «Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ-ի գործունեության հասցե՝ Կոտայքի մարզ, Երեան-Սևան մայրուղի, Բջնիի հատված շինություն 2 հասցեում բանվորական շորերով աշխատում էին թվով 2 քաղաքացի՝ Գեղամ Խաչատրյան Ալբերտի /անձնագիր AA 0553569 տրված 22.11.1996թ-ին 062 կողմից/ և քաղաքացի Արմենը, որը հրաժարվեց նշել իր ազգանունը և չտրամադրեց անձնագրային տվյալներ: Մեր կողմից ներկայացվեց ստուգման հանձնարարագիրը և աշխատողներից պահանջեցինք կապվել իրեց տնօրենի հետ: Քաղաքացի Գեղամ Խաչատրյանը գանգահարեց «Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ-ի տնօրեն Գրիշա Կոստանդյանին, որին և ներկայացրեցինք հանձնարարագիրը ծանոթացման: Հանձնարարագրին ծանոթանալուց հետո Գրիշա Կոստանդյանը մեզ ներկայացրեց համպատասխան փաստաթղթեր /աշխատանքի ընդունման ներքին իրավական հրաման/, որից ինչպես նաև Չարենցավանի ՍԱՏԲ 21.05.2012թ-ի թիվ 02/506 գրությամբ պարզվեց՝ վերոնշյալ քաղաքացիները օրենքով սահմանված կարգով ձևակերպված չեն «Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ-ում որպես աշխատող: Քաղաքացի Գեղամ Խաչատրյանն ընկերության նախկին աշխատողն էր, որը աշխատել է ընկերությունում 01.07.2011թ-ից մինչև 30.03.2012թ-ը: Գեղամ Խաչատրյանը և Արմենը հրաժարվեցին գրավոր հայտարարություն տալուց:

Ընկերության կողմից խախտվել է «« աշխատանքային օրենսգրքի» 83-րդ հոդվածի պահանջները: Համաձայն «« աշխատանքային օրենսգրքի» 85-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի չգրանցված աշխատողների համար ենթակա է բյուջե վճարման 120.000 դրամ:

«Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Համաձայն Չարենցավանի ՏՀՏ պետի 20 ապրիլի 2012թ. թիվ 2109996 հանձնարարագրի 15.05.2012թ-ից մինչև 22.05.2012թ-ը կատարվել է «Սիցիլիա Գեյմս» ՍՊԸ աշխատողների աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: 22 մայիսի 2012թ. ամփոփելով ստուգման արդյունքները, Չարենցավանի ՏՀՏ-ն պատշաճ ձևով ընկերությանը ներկայացրել է ստուգման ակտի նախագիծ: Ընկերությունը 24.05.2012թ. Չարենցավանի ՏՀՏ է ներկայացրել ակտի նախագծի վերաբերյալ իր առարկությունները: Չարենցավանի ՏՀՏ-ն առարկությունները ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա փոխարեն չորս աշխատանքային օրում՝ 31.05.2012թ., կազմել է ստուգման ակտ և այն ներկայացրել ընկերության ստորագրմանը 04.06.2012թ-ին, խախտելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր ժամկետները:

Ստուգման ակտում արձանագրվել է, որ ընկերության գործունեության հասցեում Կոտայքի մարզ, Երևան-Սևան մայրուղի Բջնիի հատված շինություն 2, բանվորական շորերով աշխատում էին թվով երկու քաղաքացիներ: Ընկերությունը գործունեություն իրականացնելու նպատակով վարձակալել է նշված շինությունը և մինչև 31.03.2012թ. այդ շինության ներսում իրականացրել է շահումով խաղերի կազմակերպման (խաղային ավտոմատների շահագործում) և հանրային սննդի կազմակերպման գործունեություններ: 01.04.2012թ. ընկերությունը դադարեցրել է իր գործունեությունը և այդ մասին տվել է գրավոր հայտարարություն: Ընկերությունը 01.04.2012թ-ից մինչ օրս ոչ նշված, ոչ էլ այլ հասցեներում չի ծավալել որևէ գործունեություն: Ստուգման ակտում նշված չէ, թե ստուգման պահին ինչ աշխատանքներ էին կատարում թվով երկու քաղաքացիները, իսկ <աշխատանքային շորերը> ինչ գործունեության են վերաբերվում, հանրային սննդի կազմակերպման, շահումով խաղային ավտոմատների շահագործման, թե որևէ այլ մասնագիտությունների: Ստուգման ակտում նշված չէ թե որտեղ էին աշխատում այդ երկու քաղաքացիները, շինության ներսում, թե՛ դրսում: Ստուգման ակտի նախագծի վերաբերյալ ներկայացրած առարկություններում ընկերությունը նշել է, որ վարձակալված տարածքում որևէ աշխատանք կատարված չէ և այդ մասին ակտում նշված չէ, իսկ շինությունից դուրս կատարված աշխատանքների հետ ընկերությունը կապ չունի և պատասխանատու չէ: Այդ քաղաքացիները նույնիսկ բանավոր չեն հայտարարել, թե հանդիսանում են <Սիցիլիա Գեյմս> ՍՊԸ-ի աշխատողներ, հակառակ դեպքում այդ մասին ակտում նշված կլիներ:

Հաշվի առնելով վերը նշվածը, ընկերությունը գտնում է, որ ստուգման ակտը չի համապատասխանում իրականությանը և խնդրում է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 11 հոդվածի համաձայն վերադասության կարգով քննության առնել սույն բողոքարկումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ օբյեկտիվ որոշում ընդունելու նպատակով նյութերը ուղարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն: Հետաքննության ընթացքում Գեղամ Խաչատրյանը 04.07.2012թ-ին տվել է գրավոր բացատրություն հետևյալի մասին: Գեղամ Խաչատրյանը մասնավորապես նշել է, որ 15.05.2012թ-ին իր ընկեր Արմենի հետ գնացել են նախկին աշխատավայր, որը գտնվում է Երևան-Սևան մայրուղի, Բջնիի հայտված, շինություն 2 հասցեում՝ աշխատավարձի մնացած գումարը պահակից վերցնելու համար: Այն պահին, երբ Գեղամ Խաչատրյանը և պահակը սուրճ էին խմում, իրենց է մոտեցել մի երիտասարդ և հարցրել, թե նրանք ինչ են անում այդտեղ և խաղատունը աշխատում է, թե ոչ: Երիտասարդին պատասխանվել է, որ իրենք պարզապես սուրճ են խմում, իսկ ինչ վերաբերվում է խաղատանը, ապա այն չի աշխատում: Որից հետո երիտասարդը ներկայացել է որպես հարկային տեսչության աշխատակից և հարցրել է, թե ինչ աշխատանքներ են կատարվում ընկերության տարածքում: Հնչել է պատասխան, որ ընկերության տարածքում որևէ աշխատանքներ չեն կատարվում: Սակայն, հարկային տեսչության աշխատակիցը հայտնել է, որ ընկերության տարածքում կատարվել են աշխատանքներ, ինչի համար պատրաստվում են տուգանել ընկերության տնօրենին:

Գեղամ Խաչատրյանը նշել է նաև, որ ընկերության գործունեությունը դադարեցվելուց հետո իր կողմից որևէ վճարովի աշխատանք չի կատարվել: Բացատրությունում Գեղամ Խաչատրյանը նշել է, որ 15.05.2012թ-ին, երբ իր ընկեր Արմենի հետ այցելել են նախկին աշխատավայր, եղել են տնային շորերով: Իսկ ակտում նշվածը, որ ընկերության գործունեության հասցեում բանվորական շորերով Գեղամ Խաչատրյանը և քաղաքացի Արմենը աշխատում էին, չի համապատասխանում իրականությանը:

14.07.2012թ-ին գրավոր բացատրություն է տվել նաև ստուգման ակտում հիշատակված քաղաքացի Արմենը (Արմեն Գևորգյանը), որը հաստատել է Գեղամ Խաչատրյանի բացատրությունում բերված տեղեկությունները պնդելով, որ իր կողմից ընկերությունում կամ դրա հարակից տարածքներում որևէ աշխատանք չի կատարվել:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման արդյունքում, ըստ էության, չի հիմնավորվել ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը, այն դեպքում, երբ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ կողմից 22.05.2012թ-ին կազմվել է թիվ 2109996 ստուգման ակտի նախագիծը, որը նույն օրը ներկայացվել է ընկերության տնօրենին: Ընկերությունը 23.05.2012թ. գրությամբ առարկություններ է ներկայացրել Չարենցավանի ՏՀՏ թիվ 2109996 ակտի նախագծի վերաբերյալ, որը Չարենցավանի ՏՀՏ-ում մուտք է եղել 24.05.2012թ-ին:

<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. <Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում ակտի նախագծի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում ստուգող մարմինը ուսումնասիրում է դրանք և առարկություններ ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ակտի մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ստորագրմանը>:

Վերոգրյալից հետևում է, որ ակտի նախագծի վերաբերյալ առարկությունները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է կազմվեր ստուգման ակտը և այն ներկայացվեր ընկերության տնօրենի ստորագրմանը: Սակայն, փաստացի ստուգման ակտը կազմվել է և ներկայացվել ընկերության տնօրենի ստորագրմանը առարկությունները ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օր հետո: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ժամկետների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ 31.05.2012թ. թիվ 2109996 ստուգման ակտը:



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ